

կրորդ եպիսկոպոսին՝ Գրիգոր Մեծին՝ իշխանութիւն շնորհեց որ իւր աթոռն Ղեմպէրկի փոխադրէ⁴։ Յետոյ 1379ին Հայք հոս նաեւ մեծամեծ արտօնութիւններ ընդունեցան⁵։

Ի Ղեմպէրկ եւ առ հասարակ ի Ղեհաստան Հայք 1500էն սկսեալ թաթարերէն կը խօսէին. այս լեզուն յետոյ նաեւ Վալիցիոյ ատեանները մտաւ, եւ նոյն իսկ Ղեմպէրկի վճռոց մատեանն (Decretalenbuch) առ սէր Հայոց՝ 1630էն մինչեւ 1641 թաթար լեզուաւ կը գրուէր⁶։

Նաեւ ի Հունգարիա շատ կանուխ ժամանակաւ հաստատուեցան Հայք, վասն զի հունգարացի ժամանակագիրն կ'ըսէ. «Բաց ասկէ Հունգարիա եկան թէ՛ Կէյզա Գրսին (972—995) թէ՛ Ստեփանոս Սուրբ թագաւորին (997—1038) ժամանակ, եւ թէ՛ այլ թագաւորաց ատեններն Պոհեմիացիք, (Գնչու) Պոլոնիացիք, Յոյնք, Սպանիացիք, Իսմայէլացիք, Պէսք, Հայք եւ այլն, որոնք երկայն ժամանակ պետութեան մէջ բնակելով, — թէեւ իրենց ծագումը չէր գիացուեր, — այլեւայլ ամուսնութեամբք խառնեցան Հունգարացոց հետ եւ ազնուականութիւն ու սերունդ ունեցան⁷։» (Այլեւայլ ազգաց ի Հունգարիա մուտն, Մասն Ա. Գլ. 12։)

Ի Հունգարիա արդէն 1243ին արտօնութիւններ ընդունեցան Հայք, զորոնք Պէլա Գ նորոգեց, նաեւ Ղատիսլաւ Գ թագաւորին 1281ին տուած մէկ վաւերագրոյն մէջ կը յիշուի «երկիր Հայոց» եւ «մենաստան» մը⁸։